# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ

Սպանդարյան համայնք spandaryan.shirak@mta.gov.am 094927875

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

ՊԱՐՈՆ ՖԵԼԻՔՍ ՑՈԼԱԿՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Շիրակի մարզի Սպանդարյան համայնքի թիվ 25-Ն, 26-Ն, 28-Ն, 29-Ն , 34-Ն որոշումները :

Սպանդարյան համայնքի ղեկավար Վ. Բաղդասարյան

Մուտք թիվ 11637-14

29 12 2014

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ N 25-Ն

<< 01 >> դեկտեմբերի 2014 թվականի գյուղ Սպանդարյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 34-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյանի համայնքի ավագանին

որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը՝ 7 ։
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյանի գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի։
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյանի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2014 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 34 -Ն որոշումը։

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Սահակյան Պարույր՝ կողմ

Վարդանյան Արտաշես՝ կողմ

Բաղդասարյան Արմեն՝ կողմ

Հարությունյան Արթուր՝ կողմ

Պողոսյան Պետյա՝ կողմ

Սահ[illegible]յան Հարություն [illegible]

Գալոյան Վենց[illegible] կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«01» դեկտեմբերի 2014 թվական

գ. Սպանդարյան

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Սպանդարյանի համայնքի ավագանու 2014 թվականի
դեկտեմբերի 01 -ի թիվ 25 -Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը - 7

| Հ/հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%) | Սահման-ված դրույքը | Սահմանված դրույքաչափը (դրամ) | Ընդամենը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Համայնքային ծառայության պաշտոններ | | | | | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար (1.2-1) | 1 | 175.000 | 72.91 | 1 | 175.000 | 175.000 |
| 2 | Առաջատար մասնագետ-ֆինանսիստ (2.3-1) թափուր | 1 | 170.000 | 70.83 | 1 | 170.000 | 170.000 |
| 3 | առաջին կարգի մասնագետ Ծածկագիր /3.2-1/ | 1 | 167.000 | 68.76 | 1 | 167.000 | 167.000 |
| 4 | երկրորդ կարգի մասնագետ ծածկագիր /3.3-1/ | 1 | 90.000 | 37.50 | 1 | 90.000 | 90.000 |
| | Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | | | | | |
| 5 | Օպերատոր | 1 | 66,140 | 27.55 | 1 | 66,140 | 66,140 |
| 6 | Հավաքարար | 1 | 70.822 | 29.50 | 1 | 70.822 | 70.822 |
| 7 | Ակումբավար | 1 | 110.000 | 45.83 | 1 | 110.000 | 110.000 |
| | ընդամենը | 7 | 848.962 | | 7 | 848.962 | 848.962 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ «01» դեկտեմբերի 2014 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 26-Ն

<< 01 >> դեկտեմբերի 2014 թվական — գյուղ Սպանդարյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ2-Ի ԹԻՎ 37-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյան համայնքի ղեկավարի 2015 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 36,28 %-ի չափով՝ 240.0 դրամ (երկու հարյուր քառասուն հազար) դրամ :
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյան համայնքի ավագանու 2013թվականի դեկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյան համայնքի ղեկավարի 2014 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին» թիվ 37-Ն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Սահակյան Պարույր՝ կողմ

Վարդանյան Արտաշես՝ կողմ

Բաղդասարյան Արմեն՝ կողմ

Հարությունյան Արթուր՝ կողմ

Պողոսյան Պետյա՝ կողմ

Ստեփանյան Հարություն՝ կողմ

Գալոյան Վենիկ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«01» դեկտեմբերի 2014 թվական

գ. Սպանդարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Սպանդարյան, ,

# ՈՐՈՇՈՒՄ N 28-Ն

<< 01 >> դեկտեմբերի 2014 թվական

գ. Սպանդարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ-Ի ԾՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ .

Ղեկավարվելով » Տեղական ինքնակառավարման մասին« Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի դրույթով Սպանդարյանի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Սպանդարյանի ,, Նախադպրոցական ուսումնական հաստատություն ,, ՀՈԱԿ-ի ծնողական միջոցների չափը սահմանել՝ ամսական 4000 / չորս հազար / դրամ;

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Սահակյան Գարուշ՝ կողմ

Վարդանյան Արուսեկ՝ կողմ

Բաղդասարյան Արմեն՝ կողմ

Հարությունյան Արթուր՝ կողմ

Պողոսյան Պետյա՝ կողմ

Ստեփանյան Հարություն՝ կողմ

Պողոսյան Վաչիկ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՂԻՆԱԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 29-Ն

<< 01 >> դեկտեմբերի 2014 թվական գյուղ Սպանդարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 02-Ի ԹԻՎ 35-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, <<Իրավական Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Իսահակյանի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյանի համայնքի վարչական տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Իսահակյանի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 02-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյան համայնքի վարչական տարածքում 2014 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 35-Ն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Սահակյան Պարույր՝ կողմ
Վարդանյան Արտաշես՝ կողմ
Բաղդասարյան Արմեն՝ կողմ
Հարությունյան Արթուր՝ կողմ
Պողոսյան Պետյա՝ կողմ
Ստեփանյան Հարություն՝ կողմ
Գալոյան Վենիկ՝ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«01» դեկտեմբերի 2014 թվական գ. Սպանդարյան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ի ԹԻՎ 29 -Ն ՈՐՈՇՄԱՆ

• Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ինն հազար դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ինն հարյուր դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ինն դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև մեկ հազար հինգ հարյուր դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է երեսուն հազար դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ մեկ հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ մեկ հազար դրամ.

6. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է տուրք հետևյալ դրույքաչափերով՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ զրո դրամ

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ զրո դրամ .

3) մեկ շաբաթվա համար՝ զրո դրամ .

4) մեկ ամսվա համար՝ զրո դրամ .

5) մեկ տարվա համար՝ զրո դրամ

7. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

2)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝հիսունհազար դրամ .

3)բաղնիքների (սաունաների) համար՝երկու հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

5) շախմատով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ;

3) այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուրդրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է զրո դրամ:

11. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ:

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է զրո դրամ:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հինգ հազար դրամ :

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հինգ հարյուր դրամ :

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ հինգ հարյուր դրամ

4. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող եւ (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ յուրաքանչյուր ամիս չորս հարյուր դրամ ։

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ զրո դրամ.

2) ոչ կենցաղային եւ խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ զրո դրամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ զրո դրամ։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՂԻՆԱԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

# ՈՐՈՇՈՒՄ N 34-Ա

<< 02 >> դեկտեմբերի 2013 թվականի գյուղ Սպանդարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ <<ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 02-Ի ԹԻՎ 27-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյանի համայնքի ավագանին

որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյանի<Սպանդարյանի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը 8 դրույքաչափը ՝ 6. 5 միավոր
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյանի <<Սպանդարյանի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյանի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի-ի 02 -ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Սպանդարյանի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2014 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 27-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Սահակյան Պարույր կողմ

Վարդանյան Արտաշես՝ կողմ ------------------

Բաղդասարյան Արմեն՝ կողմ ------------------

Հարությունյան Արթուր՝ կողմ ------------------

Պողոսյան Պետյա՝ կողմ ------------------

Ստեփանյան Հարություն՝ կողմ ------------------

Գալոյան Վենցիկ՝ կողմ ------------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«01» դեկտեմբերի 2014 թվական

գ. Սպանդարյան

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Սպանդարյանի համայնքի ավագանու 2014 թվականի

դեկտեմբերի 01 -ի թիվ 34-Ն որոշման

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ -Ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| հ/հ | Պաշտոնի անվանումը | Պաշտոնային դրույքաչափը /դրամ/ | Սահմանված դրույքաչափը / միավոր/ | Աշխատավարձի չափը /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 71000 | 1 | 71000 |
| 2 | Հաշվապահ | 70822 | 1 | 70822 |
| 3 | Երաժշտության դաստիարակ | 132280 | 0.5 | 66140 |
| 4 | Դաստիարակ | 132280 | 05 | 96140 |
| 5 | Դաստիարակ | 132280 | 05 | 66140 |
| 6 | Խոհարար | 66140 | 1 | 66140 |
| 7 | Հավաքարար | 66140 | 1 | 66140 |
| 8 | Բակապահ | 70822 | 1 | 70822 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 599942 | 6.5 | 543.344 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՂԻՆԱԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆ